

ԵՐԿԱԿԻ ԹՎԻ ՄՆԱՅՈՐԳՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Ռ. Հ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

Հնդեվրոպական նախալեզվի քերականական կառուցվածքի մեջ երկակի թիվը իր բնորոշ տեղն ու առանձնահատկություններն ունի: Ժողովուրդը լեզուներում այն ժամանակի ընթացքում հետզհետե վերացավ:

Լեզվաբաններից ոմանք՝ Անտուան Մեյեն, Լեի-Բրյուլը, Հրաչյա Աճառյանը երկակի թվի վերացումը դիտում են որպես քաղաքակրթության առաջընթացի ցուցանիշ: Այսպես, Հ. Աճառյանը գրում է. «Լեզվի զարգացման ընթացքում, քանի ազդերի կուլտուրական մակարդակը բարձրանում է, երբ թվի գաղափարը արդեն ուտանում է իր արդիական ձևակերպությունը, երկակին դառնում է ավելորդ և հետզհետե վերանում է՝ միանալով հոգնակիի հետ: Այսպես, մեզ համար երկակին հոգնակի է: Քաղաքակրթության հետ ջնջվում է ուրեմն երկակին էլ»¹:

Հարցին քիչ այլ կերպ է մոտենում Ս. Սապերսենը, նա գտնում է, որ նախկին ավելորդ տարրերությունների ամեն մի վերացում պրոգրեսիվ է, չնայած, որ ամբողջությամբ վերացած բարբառակրթության և քերականական մասնավոր փոփոխությունների միջև եղած պատճառական կապը հանդամանորեն ցույց տալ հնարավոր չէ²: Մի ամբողջ շարք փաստերով նա ցույց է տալիս, որ երկակի թիվը հաճախ վերացել է ոչ այնտեղ, որտեղ շատ ավելի բարձր զարգացած ման է հասել քաղաքակրթությունը, այլ այնտեղ, որտեղ նա դեռ եղել է մնում:

Եթե երկակի թվի վերացման հիմնական գործոնը համարելու լինենք քաղաքակրթությունը, ապա ինչպես հայերենի բարբառներում, այնպես էլ միջին հայերենում քերականական այլ երևույթի հետքերը գոյություն չպիտի ունենային: Ավելին, եթե հավատանք այն տեսությանը, ըստ որի՝ հայերենի բարբառները ծագել են միայն միջին դարերից՝ պետական (ֆեոդալական) անհատավածության և գրաբարի փայլալույսի հետևանքով, ապա երկակի թիվը կամ նրա հետքերը մեր բարբառներում կմնան անբացատրելի:

Հնդեվրոպական նախալեզվում երկակի թիվը հիմնականում գործածվում էին մարմնի գույգ անդամների անունները և այն գույգ առարկաների անունները, որոնց մասին խոսվում էր: Հայտնի է նաև, որ աղբյուրում գոյություն չունեին որոշակի ձևերով կամ մասնիկ երկակի թիվ կազմելու համար:

Ինչպես ամեն մի վերացող երևույթ, այնպես էլ երկակի թիվը իր որոշ հետքեր թողել է լեզվի մեջ: Երկակի թվի հետքեր հայտնաբերված են հնդեվրոպական ընտանիքի շատ լեզուներում, ինչպես՝ սլավոնական լեզուներում, գերմանական լեզուներում և այլն: Այսպես, չիս վերին գերմանական բարբառներում երկակի թիվը պահպանվում է անձնական դերանունների մեջ, սլովակերենում՝ օճի³ «աչք», լիճի՝ «ականջ» բառերում, չեխերենում՝ մարմնի գույգ անդամների անուններում՝ աչխ, ախսն, շրբոնի, ոտի, ձեռի և այլն (հմմտ. նաև սանսկրիտ aksī, հոմերյան հունարեն αχ^{στ} γλ, հրա սլավոններեն օսի, լիտվերեն օկի և այլն):

Ինչ վերաբերում է հայերենին, ապա այն որոշ չափով տարբերվում է հիշյալ լեզուներից: Բանն այն է, որ չին հայերեն գրավոր լեզուն, այսինքն՝ գրաբարը, երկակի թիվը վերացրել է, պահպանելով սակայն նրա որոշ հետքերը: Այսպես, ախն, ունկն և ծուկն բառերում,

¹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների, հատ. 3, Երևան, 1957, էջ 245:

² Օ. Есперсен, Философия грамматики, Москва, 1958, էջ 239:

³ Այս և հետագա բոլոր օրինակների մեջ հետևել ենք պրոֆ. էդ. Լեզայանի առաջարկած տառադարձությանը, իսկ օտար լեզուներից առնված օրինակները պահել ենք ըստ պրոֆ. Հ. Աճառյանի:

ինչպես ցույց է տալիս ակադ. Հ. Աճառյանը¹, գրաբարը պահպանել է երկակի թվի թե՛ իմաստային և թե՛ ձևաբանական հատկանիշները:

Ուկրաին, միջին հայերենն ու մի շարք բարբառներ հնդեվրոպական ընտանիքի շատ լեզուների համեմատությամբ, բացառությամբ չեխերենի, ավելի պարզորոշ են պահպանել ոչ միայն շնչավոր առարկաների մարմնի գույզ անդամների անունների երկակին, այլև այդ երկակին կազմելու համար ստեղծված վի մասնիկ-ձևույթը: Հատկապես այս ձևույթը, որի համազորը չունեն ցեղակից լեզուները, ցույց է տալիս, որ երկակի թիվը զարգացման բավական երկար ճանապարհ է անցել հայերենում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերենը երկակի թվի հարցում ունի չորս տարբեր վիճակներ: 1. Գրաբարյան վիճակ, որ երկակի թիվը պահում է մի քանի բառերում: 2. Երկակի թիվը իսպառ վերացրած վիճակ. այդպես են հայերենի Ում, Ս և Ն ճյուղերի բոլոր բարբառներն անխորի: 3. Միջին հայերենի ու նրա հետ մի շարք բարբառների վիճակ, որտեղ երկակի թվի հետքերը պահպանվում են հետագա զարգացման ձևով: 4. Երկակիի հետքերն այժմ էլ պահպանող վիճակ, որ լավագույնս ներկայացնում է Համշենի բարբառը:

Կանգ առնենք դրանցից յուրաքանչյուրի վրա առանձին-առանձին:

Հատուկ ուշադրություն դարձնելով երկակի թվի վրա, մեծանուն հայագետ Հրաչյա Աճառյանի իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» համեմատությամբ 562 լեզուների» աշխատության գլխական անվանը նվիրված հատորում քննում է թվի քերականական կառուցողական, ցույց տալիս, որ երկակի թիվն ու նրա հետքերը հայերենում կապվում են հնդեվրոպական լեզուների հետ, բացատրվում հնդեվրոպական նախալեզվով: Հենց դրանով նա մերժում է այն կարծիքը, թե երկակի թվի հետքերը հայերենում հետևանք են ուրարտերենի և կովկասյան լեզուների ազդեցության:

Ակադ. Հ. Աճառյանը հանգամանորեն ուսումնասիրել է հոլովումը Սպառի: Համարելով այդ քննությունը, ստորև բերում ենք երկակիի այն բոլոր հետքերը, որոնք վեր են հանված գրաբարում:

1. Ակն բառը գրաբարում ուներ երկու իմաստ՝ «մարդու, անասունի աչք» և «ջրի աչք»: Առաջին իմաստի հոգնակին լինում էր աչք, աչս, աչաց, աչսւք, իսկ երկրորդ իմաստով բառի հոգնակին՝ ակունք, ակունս, ականց, ակամք: Ակամք իսկական հոգնակի ձև է, իսկ աչսւք՝ երկակի թիվ:

Ճիշտ նույն պատկերն է նկատվում նաև սլովակերենում. oko բառի, որպես մարմնի անդամի անվան երկակին լինում է oči, իսկ այլ նշանակությամբ հոգնակին՝ oki:

2. Ունկն բառը նույնպես, ինչպես ակն բառը, «մարդու կամ անասունի ականջ» նշանակությամբ հոգնակին (այսինքն՝ երկակի թիվը) կազմում է ականջք-ականջսւք, ականջսւք, իսկ «ամանի կանթ» նշանակությամբ հոգնակին կազմում է ունկունք, ունկունս ձևերով:

Այստեղ էլ հայերենին զուգահեռ է սլովակերենը. ucho բառը իրեն մարմնի անդամ լինում է uši (երկակի), իսկ այլ նշանակությամբ՝ ucha (հոգնակի):

Հ. Աճառյանի կարծիքով ականջ բառը նկատելի կապ ունի մի կողմից զենդերեն uši «երկու ականջ», հունարեն οὖς, հին սլավոներեն ucho, «ականջ» և ունի, «երկու ականջ» բառերի հետ և մյուս կողմից նմանողություն՝ ակն և աչք բառերի հետ: Այդ կապն այն է, որ ինչպես աչք, նույնպես և ականջ բառերի մեջ գտնում ենք չ, վերջինում ռեգայինին հաջորդելու պատճառով «չ»-ն դարձել է ջ: Ակադ. Հ. Աճառյանի այդ դիտողությունը հաստատվում է նրանով, որ ն-ին հաջորդող արմատական խուլ պայթական հնչյունները հայերենում դառնում են ձայնեղ պայթական, մի երևույթ, որ օրինաչափ է հայերենի բարբառներից շատերին:

3. Ծունք<նիս. гоним-ք բառի հոգնակին լինում է ծունք, որ ենթադրվում է նիս. * gonim երկակի ձևից: Այս բառը, չնայած որոշ կետերում դուգրեսիայի չէ նախորդներին, օրինակ՝ եղանկում անհոլով է, չունի հոգնակին՝* ծնկունք ձևը, բայց հոգնակի հոլովմամբ համապատասխանում է ակն բառին, ուստի Հ. Աճառյանի բերած շարքը կասկածի տեղիք չի տալիս:

Կարևոր է նշել նաև այն, որ ականջավոր հայագետ Հյուբշմանի կարծիքով երկակի ձևի շարունակությունն են կազմում նաև ձնոք և ոտք բառերը, որովհետև դրանք էլ իմաստով երկակի են:

Ահա այն բոլորը, ինչ, իրեն երկակի թվի ժառանգություն, բացահայտված է գրաբարում: Այս բոլորից հետևում է, որ գրաբարը համընթաց է հնդեվրոպական այն լեզուներին, որոնք երկակի թիվը վաղուց վերացրել են:

1 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 3, էջ 112:

Երկակի թվի պահպանումը հատկապես հիշյալ օրինակներում, թվում է, թե միանգամայն բնական է, որովհետև աչք, ականջ բառերը, նախ՝ ամենից շատ գործածվող բառերից են, ուստի նրանք հեշտությամբ չէին կորցնի իրենց հատկացված թիվը:

Երկրորդ՝ աչք և ականջ բառերը ստացել էին ձևաբանական տարբերակում. երկակի թվով նրանք հոլովվում էին մեկ և հոգնակի թվով՝ այլ հոլովմամբ: Ինչ վերաբերում է գործածության տեսակետից նույնքան հաճախական ձեռք և ոտք բառերին, ապա սրանք որոշակիորեն տարբերվում են նախորդներից և միմյանցից: Ձեռք, ոտք բառերը երկակի և հոգնակի թվերի համար իրարից տարբեր հատուկ հոլովում չունեն. չունեն նաև զուգահեռ իմաստ, որովհետև օտեղը հատուկ է մարդուն, իսկ ոտքը ամենից շուտ պետք է անցներ հոգնակի, որովհետև մարդուց մինչև անասունը և թռչունն ու սողունը թվի գաղափարը խառնվում էր:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկակիին հատուկ հոլովաձևերն ու իմաստային տարբերությունը պահպանել են ոչ միայն ական և ունկն բառերը, այլև դուռն բառը.

երկակի—աչք, սեռ.—տր.—աչաց, հյց.—աչս, գործ.—աչաւք

հոգնակի—1. ականք, սեռ.—տր.—ականց, հյց.—ականս, գործ.—ականքբ

2. ականք: Սրանց համեմատ ունենք.

դուրք, սեռ.—տր.—դրաց, հյց.—դուրս, գործ.—դրաւք

դրունք, սեռ.—տր.—դրանց, հյց.—դրունս:

Ձուգածների համեմատությունից երևում է, որ դուրք, դրաց, դրաւք ձևերը համապատասխանում են աչք, աչաց, աչաւք ձևերին, որոնք երկակի են, իսկ դուրնք, դրանց ձևերը՝ ականք, ականց ձևերին, որոնք հոգնակի են:

Երկակի ձևով են ոտք, ձեռք, ծուկի բառերը. հավանաբար սրանց հոգնակին նախապես կազմվում էր ունք մասնիկով՝ *ծնկունք, *ոտունք, *ձեռունք, բայց հետագայում, երբ մոռացվեց երկակին և ք մասնիկը հաստատվեց որպես զուտ հոգնակի կազմիչ, վերացան այլևս ավելորդ դարձած *ծնկունք և մյուս ձևերը:

Երկակին հոգնակի վերածելու գործոններից մեկն էլ նույն բառերի եզակի հոլովաձևերն էին, մանավանդ, որ սրանք և հավելվածն ընդունել էին հաստատապես և ենթարկվել միօրինակության.

ական—ական—ականք, դուռն—դրան—դրամք, ունկն—ունկան, ոտն—ոտամք, ձեռն—ձեռումք: Են հավելվածը, սակայն, չի ազդել երկակիի հոլովման վրա:

ոտք — սեռ.— տր.— ոտից, հյց.— ոտս, գործ.— ոտիւք

ձեռք — սեռ.— տր.— ձեռաց, հյց.— ձեռս, գործ.— ձեռաւք:

Այսպիսով, երկակի թիվը գրաբարում պահպնել է ոչ միայն աչք, ականջ, ծուռ բառերում, ինչպես հաստատում է ականք. 2. Ահառայնք, ձեռք, ոտք բառերում, ինչպես ենթադրում էր հայագետ Հյուբշմանը, այլև դուռ բառի մեջ:

Թվում է, թե գրաբարը, որ հայերենի ավելի հին վիճակն է ներկայացնում, քան միջին հայերենը, պետք է երկակի թիվն ավելի ակնառու և առատորեն պահպաներ, քան միջին հայերենն ու բարբառները: Սակայն պատկերը բոլորովին հակառակն է:

Ինչպես միջին հայերենը, այնպես էլ որոշ բարբառներ, համարյա անվթար պահպանել են հնդեվրոպական նախալեզվի երկակի թվի բառերի միայն մեկ, բայց հիմնական խումբը՝ շըն-չալորների մարմնի զույգ տեղամասերի անունները: Դեռ ավելին, եթե հնդեվրոպական նախալեզուն և դուստր բոլոր լեզուները չեն ստեղծել կամ չունեն երկակի թվի հատուկ կազմիչ, ապա հայերենի բարբառները պահպանել են այդպիսի մասնիկ:

Այժմ կանգ առնենք միջին հայերենի և բարբառների վրա:

Նախապես ասենք, որ միջին հայերեն ասելով հայագետները հասկանում են Կիլիկիայի հայկական պետության ու կուլտուրայի լեզուն, որ ուսումնասիրել է գերմանացի հայագետ Կարստը: Փանի դեռ նոր ուսումնասիրություններ չկան, պարզ չէ բուն Հայաստանի միջին դարերի հայոց լեզվի վիճակը, չնայած, որ միջնադարյան գրավոր գրականությունը և արձանագրությունները վկայում են, որ եղել են միջին հայերենի մի քանի տարբերակներ՝ գրաբարի ու տեղական բարբառների բավականաչափ ականջատ համադրությամբ:

Միջին հայերենում, ինչպես հայտնի է, երկակի թիվը հետևանք չէ ոչ գրաբարի աղբյուրային, որ ինչպես տեսանք վերը, չունի այդ, և ոչ էլ որևէ օտար լեզվի ազդեցության: Երկակի թիվը միջին հայերենում նոր հորինվածք էլ չէ, որովհետև նա այդպիսի նոր քերական-

նական կարգ չի ստեղծել և ոչ էլ կարիք ունեւր ստեղծելու Բավական է նշել, որ միջին Հայերենում հոգնակի մասնիկներն այնքան շատ էին, որ կարիք էր զգացվում դրանք կրճատել՝ միօրինականություն ստեղծելու համար: Բարբառագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջին Հայերենի հոգնակի թվի բազմազան մասնիկները արդյունք են բարբառային ներթափանցումների: Ահա դրանցից մեկն էլ երկակի թվի հետքն է բարբառներին հատուկ մասնիկով:

Միջին Հայերենում երկակի թիվը¹ կազմվում էր ութի մասնիկով. ահա այն բոլոր հայտնաբերված բառերը, որոնք հոգնակիում ստանում են այդ մասնիկը. աշուի (աշվի, աշվի), ձեռուի (ձեռվի, ձեռվի), ոտուի (օտվի), ծնգվի (ծրնկվի), միջուի:

Այս բոլորից բացի — վի գրվում էր նաև իր (— իրվի), միտ (— մտվի), տուն (— տնվի), շուն (— շնվի), դուռ (— գովի) բառերի վրա:

Նկատենք, որ շնայած վի մասնիկը գրվում էր նաև ութի և տի ձևերով, բայց դրանք բոլորն էլ արտասանվում են վի, ճիշտ ինչպես այժմ. թվարկված բոլոր բառերն էլ միավանկ են և առաջին խմբի բառերից միայն մեկն է՝ դովի, որ մարմնի անդամի անուն չի նշանակում, իսկ երկրորդ խմբի բառերը կարծես հակասում են այն օրենքին, ըստ որի երկակի թիվ կարող են նշանակել միայն մարմնի զույգ անդամների անուններ:

Ինչպե՞ս էր, ինչպես ցույց է տվել Հ. Աճառյանը, իր իմաստով (դուռը զույգ փեղկերով)² չի հակասում օրենքին, ինչ մնում է մյուս բառերին, ապա դրանք վի ստացել են նմանողություն կարգով. միայն շուն բառն է, որ, ինչպես կարծում էր մեծանուն հայագետ Հ. Աճառյանը, հետին շրջանի ներմուծություն է, գրչի սխալ:

Սակայն միջին Հայերենում, ինչպես հնչյունական, այնպես էլ քերականական շատ երկվյթներ աստիճանաբար հղկվում էին: Որոշ մասնիկներ տեղի էին տալիս ուրիշների, մյուսները քարանում, դառնում էին բառի անբաժանելի մաս և այլն: Բնական է, որ—վի մասնիկը պետք է իր տեղը գտներ մյուս մասնիկների շարքում կամ վերացվեր:

Գեոեա գրաբարում դրսևորված եւ, նեւ մասնիկները, որ ժամանակակից Հայերենում հոգնակի թվի համարյա միակ մասնիկներն են, լայն տարածում գտան միջին Հայերենում: Նրանք այնպես կենսունակ էին, որ նույնիսկ ստան, տի, ք և մի շարք այլ մասնիկներով հոգնակի կազմող բառերը սկսեցին ենթարկվել եւ և նի, նեւ մասնիկներին: Սկսված միօրինականացման տենդենցը ընդգրկեց նաև—վի մասնիկով հոգնակի կազմող բառերը:—վի մասնիկը դադարեց երկակի թվի կազմող ձևով լինելուց, դարձավ հոգնակի մասնիկ և ապա՝ սկսեց տեղի տալ եւ, նեւ մասնիկներին: Որոշ բառերում, ինչպես՝ աչք, ոտք, ձեռք, խելք, միտք և այլն, գրաբարի հոգնակի ք մասնիկի նման—վի մասնիկը մնաց իբրև հիմքի մաս, որից և կազմվեց հոգնակին՝ աչքընեւ, ոտքընեւ և այլն:

Այսպիսով, միջին դարերում երկակի թվի ձևով ինչպես որ մտավ գրական լեզվի մեջ, այնպես էլ գուրս եկավ: Այն մտավ որպես բարբառային ներթափանցում, մնաց այլ խիստ ուրիշ բառերի վրա շտարածվեց և փոխարինվեց այլ մասնիկներով:

Միջին Հայերենը երկակիի հասկացություն չունեւր. նա բարբառներից ստացել էր այն ոչ որպես քերականական իմաստ, այլ որպես քերականական ձև:

Այժմ դառնանք հայ բարբառներին: Երկակիի հարցում բարբառները բաժանվում են երեք խմբի. բարբառներ, որոնք՝ 1. երկակի թվի ոչ մի հետք չեն պահպանել, 2. պահպանել են որոշ քարացած ձևեր, և 3. դեռ կենդանի կերպով պահպանում են նրա հետքերը:

Հետաքրքրական է նկատել, որ առաջին խմբին պատկանում են Ում, Ն և Ս ճյուղերի բոլոր բարբառները: Այս հանգամանքը իր հերթին վկայում է, որ ընդհանրապես արևելյան բարբառները հիշեցնում են գրաբարի վիճակը:

Բարբառների երկրորդ խմբին պատկանում են Վանի, Պոլսի, Կարնո (բացառությամբ Ախալքալաքիի և Ախալցխայի ենթաբարբառի) և մի շարք ուրիշ բարբառներ:

Թե որքան հին վիճակ է ներկայացնում երկակի թիվն այդ բարբառներում, կարելի է տեսնել բառերի հետևյալ ցանկից: Բառացանկը աշխատել ենք որքան հնարավոր է սպառել ներկայացնել. բառերը խմբավորել ենք ըստ երկակիի տարածման:

¹ Մենք նկատի չունենք հունական քերականության վրա հայ քերականների սարքած ձևվերք, որոնք քննությունը տրված է պրոֆ-դր. Գ. Զահուկյանի «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V—XV դդ.)» գրքում:

² Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 3, էջ 709:

Մունկ—ծրվեր, ծիվեր—վան¹, ձրնգվրնէր—Պոլիս, ձրնգվրնէր—Եղեսիա²

Միծ—ծրծվեր—վան

Յօնք-ընքվեր—վան, ինքվի, ինքուի, իքվի, ընքուի, իքվինէր—Պոլիս³, ունքվիդնէր—
Եղեսիա, ընքվրնի—Սասուն⁴

Զեռն — ծառքվրնէր, ծառքրնէր — Պոլիս

Անութ — հրնթվեր — վան

Լինդ — լրնդվեր — վան

Ոտն — օթվրնէր — Պոլիս, օդվրնի — Սասուն

Լէ — աշվրնէր — Պոլիս, աշվրնէր — Եղեսիա, աշվրնի — Սասուն

Ականջ — անդրջվրնէր — Ռոդոսթո

Բառերի երկրորդ խումբ

Մատն—մադվրնէր—Պոլիս

Ճանկ—ճաշվեր—վան

Ջեղ—ճեղվել—վան

Կտոր-կտորվանք—վան

Տէր—գիրվրդիք, տիրվրդանք—Կարին, տիրվանք—վան

Քոյր — քուրվրդիք — Կարին

Տալն—տավրդիք—Կարին

Ամառն — ամրովրնէր — վան

Յերեկ — ցէրէվրնէր — վան

Բառերի առաջին խումբը ներկայացնում է մարդու մարմնի դույզ անդամների անուններ, այդ բառերը սկզբնապես կազմել են երկակի թիվ վի մասնիկով, սակայն երկակի թվի մոռացման և հոգնակի թվի տարածման հետևանքով — վի մասնիկը քարացել ու մնացել է բառավորում իրեն բառահիմքի մաս, մի դեպքում ձայնավորից առաջ ի-ի սղմամբ, իսկ մյուս դեպքերում, երբ բառը հոգնակին կազմել է ներ մասնիկով, ի-ն պահվել է, բայց վեր է ածվել ի-ի՝ բաղաձայնների խճողումից խուսափելու համար (հմտ. ծառքվրնէր, անդջվրնէր, քուրվրդիք)։

Որ այդ բառերն սկզբնապես ունեցել են երկակի թիվ, երևում է նաև բառերի երկրորդ խմբից։ Այդ խմբի բառերը ոչ մի կապ չունեն երկակի հետ, բայց նրանց մեջ առկա է նույն — վի մասնիկը, ինչ որ հատուկ է բառերի առաջին խմբին։

Օրինակներից երևում է, որ — վի մասնիկը հավանաբար ստացվել է միավանկ բառերի վրա։ Բացառությամբ են կազմում չորսբանջուր խմբից երկուական բառ. բառերի առաջին խմբում ավանջ և անուք դույզ անդամների անուններ են և դրանց — վի մասնիկ ստանալը բնական է, իսկ երկրորդ խմբի երկվանկ ամառ և զերեկ բառերը — վի ստացել են համարանույթյան կարգով, թերևս այն ժամանակ, երբ երկակի թիվն սկսել էր քայքայվել ու վերանալ։ Անցումնային այդ շրջանում — վի մասնիկը ձեռք էր բերում հոգնակի թիվ կազմելու պաշտոն, ուստի երկրորդ խմբի բառերը, օրինակ՝ ֆուրվի, մադվի, իրենց — վի մասնիկով ցույց էին տալիս ոչ թե «երկու քույր», «երկու մատ», այլ հոգնակի՝ քույրեր, մատներ և այլն։

— վի մասնիկը, սակայն, իր նոր խմաստով չպահպանվեց, որովհետև մասնիկների մի-օրինակացումը, որպես ժամանակի հայերենին հատուկ տենդենց, ընդգրկել էր նաև բարբառները. այդ պայմաններում հիշյալ բառերն ստացան նաև երկրորդ, բայց արդեն սովորական — եր և ներ մասնիկները։

Այժմ արդեն հասկանալի է, թե անցման ինչ աստիճաններ են ներկայացնում մի կողմից ծունկ — ծրվեր || ձրնգվրնէր և մյուս կողմից մատն — մադվրնէր բառաշարերը։

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ երկակի թվի հարցում հիշյալ բարբառները կանոնած են համարյա այն աստիճանի վրա, ինչ՝ միջին հայերենը։

Բարբառների այս (երկրորդ) խմբի մասին վերը շարադրվածը հաստատվում է Սվեդիայի

¹ Հ. Անադյան, Քննություն վանի բարբառի, Երևան, 1952։

² Ա. Ղարիբյան, Հայերեն նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան, 1958 (տե՛ս բառացանկը)։

³ Ակադ. Հ. Անադյանը նկատում է, որ Պոլսի բարբառում յօնք (հոգնակին՝ ինքուի, ընքուի, իքուի) բառի վրա ներ մասնիկի տարածման շնորհիվ երկակիի նախկին ձևը մոռացվեց և եզակին դարձավ իքվի, հոգնակին՝ իքվինէր։

⁴ Վ. Պետոյան, Սասունի բարբառը, Երևան, 1945։

բարբառի տվյալներով: Այս բարբառում նախկին երկակի — վի մասնիկը դեռ պահպանվում է, բայց գործ է ածվում հոգնակին կազմելու համար: Այդ մասնիկով հոգնակի են կազմում 34 գոյական անուններ. սա ամենամեծ թիվն է բոլոր այն բարբառների համեմատությամբ. որոնք իբրև հոգնակի ունեն այդ մասնիկը: Այդ երեսունչորս բառերից վեցը մարմնի զույգ անդամների անուն են (աչ — իշվա, թուշ — թշվա(ք), ուս — ուսվա, ձեռն — ձառվա || ձիովա, մեջ (ք) միշկվա, յօնք — օնքվա || ունքվա: ունքվա (ք):

Ավեդիայի բարբառի համեմատությամբ շատ ավելի պարզ վիճակ են ներկայացնում Զևթունի ու Մշո բարբառները: Զևթունի բարբառում վի մասնիկով հոգնակի կազմող բառերից չորսը մարմնի զույգ անդամների անուններ են (աչք, հոնք, ոտք, ականք), մնացածները դարձյալ չորս, այլ կարգի բառեր են (այծ, շուն, տուն, քույր):

Մշո բարբառում էլ աչք, ոտք, ձեռք բառերը հոգնակին կազմում են թե՛ երևի և թե՛ վի մասնիկներով՝ իշվի, ձեռվի, օղվի. բարբառն ունի նաև ճեղ «արազաղ» — ճիղվան, ճիղվանք և ճիղվանքներ. տուր — տիրվողան, տիրվողանք, տիրվողանքներ և դիրվողիք տալն — տալվողիք և այլ ձևեր:

Էլ ավելի պարզ վիճակ են ներկայացնում Արամույի ու Քարուսի բարբառները, որովհետև այստեղ վի > վա մասնիկով հոգնակին կազմում են մի քանի բառեր միայն. աչ — աշվա կամ քշվայն (Արամույ), իշվա (Քարուսի), թուշ — թուշվա (Քարուսի):

Այս բարբառները նույնպես ցույց են տալիս, որ նախկին երկակի մասնիկը վեր է ածվել հոգնակի մասնիկի ու դեռ պահպանվում է:

Ավելի հետաքրքրական են Լեհաստանի ու Սուշավայի հայերեն բարբառները և Կարնո բարբառի Ախալքալարի — Ախալքալայի ենթաբարբառը. այստեղ — վի մասնիկը — վրնէր մասնիկին զուգընթաց, պահվում է միայն մարմնի զույգ անդամների անունների հոգնակին կազմելու համար: Ահավասիկ այդ սակավաթիվ բառերը.

Աչ — Դ աշվի, Դ աշվրներ — Ախալք. Ախալք¹, աշվի — Լհ, աշվրներ — Լհ. Սշ².

Մունկ — Ժունգվի, Ժունգվներ — Ախալք. Ախալք³, ձունգվի — Լհ. ձրնգվներ — Սշ.

Ձեռն — ձ'ուվ, ձ'ուվներ — Ախալք. Ախալք³, ձ'ուվներ — Լհ.

Յօնք — ունքվի, ունքվներ » » օնքվի — Լհ, օնքի — Սշ, օնքիներ — Սշ.

Ուտն — վոգվի, վոգվներ » » օղվներ — Լհ, օղվներ — Սշ.

Ականք — աղքնջվներ — Սշ. ականջվի — Ախալք.

Ավելորդ չենք համարում նշել, որ այս ձևերը, բարբառների անհետացման պատճառով միօրինակ չեն, այսինքն, կազմվում են և — վի, և — վրնէր մասնիկներով:

Երկրորդ խմբի բարբառները, ինչպես տեսնում ենք, երկակի թվի զագավարը վաղուց վերացրել են, պահելով, սակայն, ձևական այն հիմնական հատկանիշները, որոնք հատուկ էին երկակի թվին:

Կարևոր են երրորդ խմբի բարբառները, որոնք դեռ պահպանում են զրաբարում, միջին հայերենում ու նոր գրական լեզվում և բարբառների մեծագույն մասում մոռացված երկակի թվի հետքեր:

Ըստ ամենայնի ուսումնասիրված բարբառներից միայն մեկն է, որ դեռ պահպանում է երկակի թիվը, դա Համշենի բարբառն է: Ստորև բերում ենք այն բոլոր բառերը, որոնք հոգնակին կազմում են — վի մասնիկով³:

Աչք «աչք» — աշվի

Թուշ «տուշ» — թշվի

Մէռ «ձեռք» — ձեռվի

յօտի «ոտք» — օղվի

Ունք «հոնք» — րնքվի, ունքվի

բրոբրնք կամ բրոմբրնք «շրթունք», «պոկունք» — բրոբրնքվի, բրոմբրնքվի

Ձունգ «ժունկ» — ձրնգվի

թէվ «թե» — թէվվի

Աք «ոտք» — արվի

օնգօնք «ականք» — օնգօնքվի

Տուռ «դուռ» — տրովի «դուռն երկու փեղկերը»

Գօղէշ «կոտուշ» — գօղէշվի

Ինչպես նաև՝ Գօղ «Հանկ» ջօնգվի, ջօնգվի, մաղ «մատ» — մաղվի, Զօղ «ծոց» — ձօղվի: Նկատենք, որ Համշենի բարբառը մարմնի զույգ անդամների անունները ներկայացնում է լրիվ չափով, դրանց հոգնակին ուրիշ մասնիկով չի կազմում և մի քանի ուրիշ բարբառների

¹ Հ. Մկրտչյան, Կարնո բարբառը, Երևան, 1952, էջ 46:

² Հ. Աճառյան, Քննություն Աղսիայի բարբառի, Երևան, 1953, էջ 132:

³ Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, էջ 84:

նման խարուխը չի դնում միավանկ ու բազմավանկ բառերի միջև. բավական է, որ բառը ցույց տա մարմնի զույգ անդամ, նրա հոգնակին կազմվում է — վի մասնիկով:

Այս բարբառում էլ, ինչպես երևում է, գործ ունենք դարձյալ հոգնակի թվի հետ, որ կարծես հիմար չի տալիս պնդելու երկակի թվի գոյությունը բարբառներում: Սակայն Համշենի բարբառը դեռ պահպանում է երկու գեղեցիկ օրինակ, որոնք կասկած չեն թողնում երկակի թվի գոյության մասին հենց այժմ:

«Քննություն Համշենի բարբառի» և ապա «Լիակատար քերականություն հայոց լեզվի», (հատոր 3) աշխատություններում Հ. Աճառյանը ցույց է տվել, որ Համշենի բարբառում «գուռ» և «եզ» բառերի հոգնակին կազմվում է Լրկու ձևով՝ արվովի «գուան Լրկու փեղիկերը» և տոնելու կամ արովդաք «գանազան տների և սենյակների դռներ»:

Երկակի գաղափարը ավելի ցայտուն է երևում և՛ բառի մեջ, այսպես՝ Լզնի նշանակում է «մեկ լուծ եզ», իսկ Լզնել՝ «երկուսից ավելի կամ խումբ եզներ»:

Հատուկ ուշադրություն դարձնելով այդ երկու ձևերի վրա, ակադ. Աճառյանը գտնում է, որ դրանք շատ անկանոն են և՛ Լզն բառը, որպես միավանկ բառ, հայերենի ընդհանուր օրենքով հոգնակին չպիտի կազմեր նի մասնիկով, այլ միայն՝ էր մասնիկով: Քննելով դրա պատճառը, հեղինակը ցույց է տալիս, որ այդ անկանոնությունը հետևանք է որևէ բարբառի ազդեցության և ոչ էլ գրաբարի Լզնի շրջման (եզինք՝ Բ-ի կորստով՝ եզնի), այլ այն բանի, որ Համշենի բարբառը հասել է «երկակիի գաղափարին, որ ինչպես հայտնի է՝ կար հին հնդեվրոպական լեզուների մեջ, ապա վերացվեց այժմ, իբրև մնացորդ խոր հնության, մնում է չեխերենում («Լիակատար քերականություն...», հատ. 3, էջ 730 կամ «Քննություն Համշենի բարբ.», էջ 86):

Այս երկու օրինակը ցույց են տալիս նաև, որ երկակիի գաղափարը մարմնի զույգ անդամների վրայից կարող էր տարածվել դանազան զույգների վրա: Դրանք միևնույն ժամանակ վկայում են, թե զույգի գաղափարի հետ կապ չունեցող բառերի վրա ե՛րբ և ի՛նչ պատճառով կարող էր տարածվել երկակին:

Այսպիսով, Համշենի բարբառը լավագույնս վկայում է երկակիի գոյությունը նաև այժմ: Իրավացի է ակադ. Հ. Աճառյանը, որ անվերապահորեն ասում է. «—Վի ձևով հոգնակիները երկակի են» եղել (Լիակատար քերականություն», հատ. 3, էջ 712), նշել են մարմնի զույգ անդամների անուններ:

Մեր բարբառները, այսպիսով, ճանաչում են մարդու, ինչպես նաև կենդանիների մարմնի զույգ անդամների՝ Լեռնույ տնտնները՝ ունի, ափ, ականթիլունի, բուշ, պոռնի, անոթ, ձիծ, ուսիլաք, ծուկ, ինչպես նաև լինդ, մեֆ, կոտոշ: Այս բոլորից երկվանկ են չորսը, իսկ մյուսները՝ միավանկ:

Ուշագրավն այն է, որ սրանց հոգնակին չի կազմվում գրաբարյան ակն, ձեռն և նման և հավելվածն ունեցող արմատներից, այլ դրանց պարզ արմատական ձևերից (այդպես է նա գրաբարում), որոնք ավելի հին են, քան և հավելվածով այն ձևերը, որ հնդեվրոպական նախալեզվից չեն ավանդված:

Հարց է ծագում, թե ուրաղից է երկակիի գաղափարը հայերենի բարբառներում:

Հայագետներից շատերը (Այտրյան, Ն. Ադոնց, Ստ. Մալխասյան, Ա. Ղարիբյան և ուրիշներ) չժխտելով բարբառների առաջացումը V դարից հետո, պնդում են, որ բարբառները գոյություն են ունեցել նաև հայ գրավոր գրականության սկզբնավորման շրջանում և նրանից առաջ: Նրանցից հատկապես ակադ. Ա. Ղարիբյանը զարգացնում է այն միտքը, թե հայերեն բարբառները հայոց լեզվի ձևավորման շրջանից սկսած մի անընդմեջ շղթա են կազմելու Իսկ Հ. Աճառյանը մերժելով բարբառների գոյությունը V դարում, նրանց ծագումը վերագրում է XII և հետագա դարերին:

Երկակիի գոյությունն ու նրա հետքերը հայերենի բարբառներում, մեր կարծիքով, որոշ չափով լույս է սփռում հայագիտության մեջ մեկ դարից ավելի վեճի առարկա դարձած այս հարցի վրա:

Եթե ընդունենք, որ հայերենի բարբառներն առաջացել են X դարից հետո, ապա պետք է ընդունենք, որ երկակիի գաղափարը բարբառներում ստեղծվել է X դարից հետո և միանգամայն ինքնուրույն ճանապարհով: Բայց այդ եզրակացությամբ մեղանշած կլինենք պատմության դեմ, որովհետև հայ ժողովուրդը, որ զարգացած գրական լեզու ուներ, չէր կարող վերադառնալ մտածողության այն շրջանին, ինչ նա ապրել էր առնվազն 2500 տարի առաջ, մի

¹ Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, էջ 86:

ժամանակաշրջան, երբ երկակի թվի դադարվարը միանգամայն բնական էր:

Երկակիի քերականական դադարվարը X դարից հետո առաջանալ չէր կարող մանավանդ այն պատճառով, որ հին հայերենում քերականական թիվը և նրա ձևավորումը հասել էր կանոնավորության:

Երկակի թիվը բարբառներում կապ չունի ոչ գրաբարի հետ, որը, ինչպես հայերենի արեվելյան բարբառները, լիովին վերացրել էր այդ թիվը նախքան գրավոր լեզու դառնալը, և ոչ էլ այն լեզուների հետ, որոնք ապրել են հայերենի հարևանությամբ կամ ձուլվել նրա մեջ: Սնում է բնգունել, որ երկակի թիվը բարբառներում դալիս է հնագույն հայերենից և ոչ ուրիշ աղբյուրից: Ուրեմն, հնագույն հայերենն ունեցել է բարբառներ, որոնցից մի քանիսը հարատևելով պահպանել են երկակի թվի հետքերը: Հայոց լեզվի պատմությանն է վերաբերում այն հարցը, թե բարբառներից որոնք են հնագույն և որոնք՝ X դարից հետո առաջացած:

Այսպիսով, — վի մասնիկով կազմվող հոգնակին երբեմնի երկակիի հետքն է¹ և վկայությունը՝ հնագույն շրջանում բարբառների գոյության մասին: Հանձին Համբնի բարբառի, ինչպես նաև Սվեդիայի, Առտիայի, Ջելթոնի բարբառների և Ախալցխայի ու Ախալքալաքի կնթաբարբառի, հին հայերենը գուցե թաց է չեխերենին, որը նույնպես կորցրել է երկակի թիվը, բայց այն դեռ պահում է մարմնի գույզ անդամների անվան համար:

Այժմ, երկու խոսք էլ վի մասնիկի վերացման ժամանակաշրջանի մասին:

Գրաբարի Բ հոգնակի մասնիկը բարբառներում մնաց իբրև բառահիմքի մաս և, բացառաբար միայն՝ ձայնավորով վերջացող բառերի հոգնակին կազմելու մասնիկ՝ մի շարք բարբառներում: Այս Բ մասնիկն իր ծագումը շատ ավելի հին է, քան միջին հայերենի ու որոշ բարբառների աի, դաֆ և նման ոչ-հաճախ գործածվող մասնիկները: Այլ խոսքով՝ ևնօֆ և ձեռֆեռ ձևերից հինը առաջինն է: Նույն ձևով ձեռվի ավելի հին ձև է, քան ունֆվրդաֆ. համարյա ժամանակակից ձևեր են ծրծվեր և ամառվրներ: Այս վերջին ունֆվրդաֆ, ծրծվեր, աստավրներ ձևերը դալիս են միջին հայերենի ժամանակաշրջանից: Դրան իրիկ լավագույն ապացույց կարող է հանդիսանալ վանի բարբառի չօքլ բառը, որը, չնայած թուրքական փոխառության է, բայց հոգնակին կազմում է նման մարմնի կրկնակի անդամների անունների, այսինքն չօքլվեր կամ շրջմամբ՝ ֆօլվեր: Քանի որ վանի բարբառը վեր հոգնակի մասնիկ չունի, այլ վի և եր, ուստի չօքլ բառը փոխառությունը անմիջապես հետո հոգնակին կազմել է վի մասնիկով, իսկ հետագայում, երբ այդ մասնիկը քարացել և դարձել է բառահիմքի մաս, բառը ստացել է եր մասնիկը: Թուրքական COX բառը փոխառվել է համարվում XII դարից: այդ ժամանակ վի մասնիկը վանի բարբառում դեռ գիտակցվում էր որպես հոգնակի Ըստ երևույթին հենց այդ ժամանակներում էլ կազմվել են վանի բարբառի թե չօֆվեր և ճայվեր «ճանկ» ցլեկվրներ «ցերեկ», տիվանֆ «տեր», լրեդվեր «լինդ» և մյուս ձևերը: Նույն ժամանակաշրջանից սկսած արդեն աչք, ձեռք, ոտք, բառերը կորցնում են վի մասնիկը և հոգնակին կազմում եր մասնիկով:

Այս բոլորից հետևում է, որ վի մասնիկը գոյություն ունի նախքան XII դարը՝ որպես հոգնակիի մասնիկ, իսկ ավելի առաջ՝ որպես երկակիի մասնիկ:

Բայց ի՞նչ է այդ վի մասնիկը, որ անհայտ է ցեղակից լեզուներին և այնքան հարազատ հայերենին: Այս հարցի պատասխանը գտնում ենք Հ. Աճառյանի մոտ: Նա հաստատում է, որ — վի մասնիկով կազմվող հոգնակիները, որպես գույզ անդամների անունների ձևեր, «կապակցվել են երկու դադարվարի հետ», իսկ եր մասնիկով «հոգնակիները լուրճվալ հաճախ հոգնակի»²: Ենեցով այդ բնորոշումից, նա գրում է. «Վի—առաջանում է անշուշտ հնագույն ուի ձևից, իսկ սա էլ կազմված է այն նույն ու ձայնից, որ գտնում ենք երկու բառի վերջա-

¹ Այդ են հաստատում տկադ. Հ. Աճառյանի նաև հետևյալ տողերը. «Քննությունները ցույց են տալիս, որ այս (վի — Ռ.Բ.) մասնիկը հայերենի հնագույն երկակիի մասնիկն է և ըստ այսմ վերի օրինակներն էլ (աչվի, ձեռվի, ոտվի, միջվի, դավի և այլն — Ռ. Բ.) նախկին երկակիներ են («Լիակատար քերականութ.», հատ. 3, էջ 709):

Վերջերս լույս տեսած «Հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (Երևան, 1959, էջ 140) գրքում Գ. Ջահուկյանը հաստատում է, որ դասական գրաբարում ուի (վի) մասնիկի մասին որևէ վկայություն չկա, բայց հաշվի առնելով այն, որ վի մասնիկը բավական տարածված է միջին հայերենում ու բարբառներում և որ այդ մասնիկի ու-ն համընկնում է երկու թվականի ու-ի հետ, գտնում է, որ հենց այդ կովաններն էլ «հավանական են դարձնում այդ մասնիկի երկակիությունն արտահայտելու նախնականությունը»:

² Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, հատ. 3, էջ 730:

վորություն մեջ: Այս ու անշուշտ երկակի մասնիկն է... հայտնի չէ, թե ինչ հավելված է ի»¹:

Այս բացատրությունը, սակայն, անվերապահորեն ընդունել չի կարելի: Անառարկելի է, որ երկակին կազմվել է երկու թվականի վրա, բայց կասկածելի է, թե երկու թվականից վերջաված լինի ու և մի ուրիշ տեղից՝ ի, որոնց բաղադրումից էլ ուի>վի:

Վի մասնիկը կարող էր ստացվել ուղիղ ճանապարհով, երկու բառի հնիս. այն ձևից, որ նշանակում է «երկոթեան» (հմմտ. սանսկ. ubhau, ubhe, հինդ. ube հսլ. oba, obe, լիտ. abi, abu, լատին. ambo, թուսար. ampi գոթ. bai):

Այդպես կարող է ստացվել մարմնի կրկնակի անդամի անվան և *ubhe «երկոթեան» բառի բարդության շնորհիվ. աշ+*ubhe>աշուի>աշվի:

Ինչ էլ որ լինի այդ վի մասնիկի ծագումը, մի բան պարզ է, որ այն քերականական ձևությ է, երկակի թվի կազմիչը: Ինչպես այդ ձևությը, այնպես էլ երկակի թիվը ընդհանրապես հայերենում կապված են հնդեվրոպական նախալեզվի հետ և մեր բարբառներում մնում են իբրև ժառանգություն հնագույն հայերենից: Հավանական է ենթադրել, որ հնագույն հայերենի բարբառների մի խումբը, օրինակ՝ Արարատյան, Գողթնի, Սյունիքի, Արցախի բարբառները, ինչպես նաև գրաբարի հիմքում ընկած բարբառը, նախքան գրերի գլուխը վերացրել է երկակին, իսկ մյուս խումբը, որ բռնում է հայաստյի հայրենիքը, պահպանել է երկակին աշվի երկար ժամանակ, իսկ նրա հետքերը՝ ցայժմ:

ПЕРЕЖИТКИ ДВОЙСТВЕННОГО ЧИСЛА В АРМЯНСКИХ ДИАЛЕКТАХ

Р. А. БАГРАМЯН

(Р е з ю м е)

Двойственное число—характерная грамматическая черта индоевропейского языка. В языках наследников это число исчезло. Как каждое исчезающее явление, так и двойственное число, оставило некоторые следы в славянских, германских и других индоевропейских языках. Казалось, что двойственное число в древнеармянском письменном языке (грабаре) должно было бы сохраниться определеннее, чем в армянских диалектах. Однако это далеко не так.

Исследования показывают, что в отношении двойственного числа армянские диалекты представляют три состояния:

1. Группа всех диалектов ветвей Ум, С. Л или восточных, в которых нет никаких следов от исследуемого числа.

2. Группа ряда западных и южных диалектов (ванский, каринский, константинопольский, ардиалский, киликийский и др.), где сохраняются некоторые застывшие формальные признаки, присущие этому числу.

3. Диалекты, как хемшинский, где двойственное число — живая грамматическая категория.

Исследование показывает, что морфема—образователь двойственного числа ուի, «ի>վի (ви) — изношенное индоевропейское слово ubhe «вдвоем, оба» было в обиходе в диалектах до XII века нашей эры.

Как эта морфема, так и понятие двойственного числа остаются в армянских диалектах как прямое наследие дописьменного армянского языка, взявшего все это

¹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, էջ 712: «Հայերեն դավառական բառարանում» (էջ 161, «Արուի» բառի տակ) Հ. Աճառյանը վի մասնիկը համարում էր գրաբարյան ունի մասնիկի ձայնափոխությունը:

² Դրա համար կարելի է համեմատել բառամիջի Ե—Վ հնչյունափոխությունը, ինչ. գործիական հոլովի հնիս...— ին, որ ձայնավորից հետո դառնում է վ, ի (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա մաս, էջ 27) և ներգործական բայի անցյալ կառարյալի ի վերջավորությունը:

от индоевропейского праязыка. Эти пережитки в диалектах являются доказательством того, что часть армянских диалектов образовалась в дописьменный период истории армянского языка.

В связи с этим сомнительно мнение лингвистов (А. Мейе, Леви-Брюль, Р. Ачарян и др.) о том, что исчезновение двойственного числа индоевропейского языка в языках наследников целиком и полностью относится к признакам прогресса. Пример армянских диалектов — хорошее доказательство того, что двойственное число сохраняется в период высокой цивилизации народа.